Ալաշկերտ համայնքի ղեկավարի 2012 թվականի 1-ին կիսամյակի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գ. Ալաշկերտ 05.07.2012թ.

Ալաշկերտ համայնքը ունենալով խաղողագործության և պտղաբուծության ուղղվածություն այս տարվա առաջին կիսամյակը բարենպաստ էր գյուղատնտեսության համար:

2012 թվականի առաջին կիսամյակում հավաքագրվել է 1.920000 հազ. դրամ հողի հարկ, 871.000 հազ. դրամ գույքահարկ և տեղական տուրքեր՝ 88.000 հազ. դրամ: Գյուղում կային բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեին և լուծում են ստացել:

1. Հորդառատ անձրևների պատճառով ճանապարհները խիստ վերանորոգման կարիք ունեին, կատարվել են ավազապատման աշխատանքներ կենտրոնական ճանապարհներին, իսկ դաշտամիջյան ճանապարհներին հողալցման աշխատանքներ: Կենտրոնական փողոցներում կատարվել են հարթեցման աշխատանքներ:

2. Կատարվել են խմելու ջրի խողովակաշարի նորոգումներ, այժմ բնակչությանը տրվում է ջուր՝ առավոտյան 9 ^{00}-ից մինչ 16 ^{00} :

3. Համայնքում պարբերաբար կատարվում է աղբաթափման աշխատանքներ /շաբաթը մեկ անգամ/ : Գյուղի սանիտարական վիճակը գտնվում է բարվոք վիճակում:

4. Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցները գտնվել են գյուղապետարանի անմիջական ուշադրության կենտրոնում և տրվել են ֆինանսական օգնություններ, ոչ միայն վետերաններին այլ նաև համայնքի անապահով բնակիչներին:

5. Անցկացվել է 4 ավագանու նիստ, որոնք պատշաճ ժամկետներում ուղվել են մարզպետարան, իսկ բյուջեյում կատարված փոփոխությունները ուղվել Արդարադատության նախարարության փորձագիտական քննարկմանը:

6. Բնակիչներին տրվել են 250-ից ավել տեղեկանքներ և տարբեր բնույթի փաստաթղթերի պատճեններ:

7. Ժամանակին և պատշաճ կերպով զինկոմիսարիատի հետ անցկացրել ենք զինակոչիկների կցագրման աշխատանքներ:

8. Վիճվարչություն է ներկայացվել նաև տարբեր բնույթի հաշվետվություններ, իսկ Ֆինբաժին և Գանձապետարան տարբեր բնույթի ֆինանսական հաշվետվություններ:

9. Բնակչությանը մատչելի գնով 6.000 դրամով / 53.000 կգ/ տրվել է ազոտական պարարտանյութ,

10. Տարիներ շարունակ չգործող ոռոգման խորքային հորը վերանորգվել և պատրաստ է շահագործման:

11. Վերաբացվել է համայնքի մանկապարտեզը և այնտեղ հաճախում են 50-ից ավել երեխաներ: Բարեկարգվել և կարգի է հրավիրվել մանկապարտեզի խաղահրապարակը և հարակից այգին:

2. Չնայած կատարված աշխատանքներին, համայնքում կան նաև չլուծված հիմնախնդիրներ.

1. Համայնքում չի գործում կուլտուրայի տունը, որը գտնվում է վթարային վիճակում:

2. Խիստ վնասված և քայքայված է խմելու ջրի ցանցը, որը ունի ամբողջովին փոփոխման կարիք:

Համայնքի ղեկավարի 2012 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությանը մասնակցում էր մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա. Թովմասյանը:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան